X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ***ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:***

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղն իր ռազմավարությամբ (ՌԾ, նպատակ 1, խնդիր 1.3) նպատակ ունի զարգացնել մասնաճյուղում դեռևս 2009թ.-ից ներդրված որակի ներքին գործընթացների իրականացման մշակույթը, բարձրացնել որակի ներքին ապահովման համակարգի կառույցների գործունեության արդյունավետությունը, ունենալ ՈԱՇ-ի պահանջներին համահունչ կրթական ծրագրեր, ապահովել դրանց պարբերական վերանայումը և դրանք իրականացնել բարձրակարգ դասախոսական կազմով: Մասնաճյուղի բոլոր գործընթացների համար իրականացնել գնահատումներ և մշակել դրանց արդյունավետության բարձրացման մեխանիզմներ: Զարգացնել համագործակցությունը ներքին և արտաքին շահակիցների հետ, վեր հանել նրանց խնդիրները, առաջարկել դրանց լուծումներ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

Մասնաճյուղում որակի ներքին ապահովման գործընթացներն իրականացվում են 2010թ.-ին ընդունված կրթության որակի բնագավառում մասնաճյուղի վարած քաղաքականությամբ (**ԳԽ, 01.02.2010թ.**), որն իր նախանշած նպատակներով և առաջ քաշած խնդիրներով այժմ էլ արդիական է և գործում է ըստ ԵՊՀ ԻՄ որակի կազմակերպական կառուցվածքի: Կրթության բնագավառում մասնաճյուղն իր քաղաքականությամբ հետամուտ է որակի Եվրոպական ուղենիշներին ու չափորոշիչներին (ԵՉՈՒ) և որակի ապահովման համակարգի մշակումը, ներդրումը և մշտական կատարելագործումը բուհի առաջնահերթ խնդիրներն են: Կրթության որակի բնագավառում մասնաճյուղի գործունեության նպատակն է ապահովել բուհի բարձր մրցունակությունը կրթական ծառայությունների շուկայում, զարգացնել ԵՊՀ ԻՄ-ի ներուժը կրթական և գիտական գործունեության ավանդական բնագավառներում, ապահովել բուհի աշխատակիցների և շահակից կողմերի բավարարվածությունը և նրանց վստահությունը ապագայի նկատմամբ: Մասնաճյուղի ղեկավարությունն ապահովում է սույն քաղաքականության արդյունավետ իրականացումը և այն ներառում է կառավարման բոլոր աստիճաններում:

ԵՊՀ ԻՄ-ում ԵՉՈՒ պահանջներին համահունչ որակի ներքին ապահովման համակարգն իր նախնական գործընթացներով ներդրվել է 2009թ.-ից: Այժմ մասնաճյուղում գործում են ՈԱ բավականաչափ մեխանիզմներ և ընթացակարգեր, որոնք նպատակաուղղված են կրթական ծրագրերի բարելավմանը, ուսումնառության ռեսուրսների որակի շարունակական բարելավմանը, ներքին և արտաքին շահակիցների մասնաճյուղից բավարարվածության գնահատման համակարգի զարգացմանը և այլն: Այդ մեխանիզմներից և ընթացակարգերից են.

1. Մասնաճյուղի բոլոր գործընթացների և ստորաբաժանումների աշխատանքների տարեկան **պլանավորումներն ըստ ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց-պլանի** և ամենամյա **հաշվետվությունները,** որոնց միջոցով ապահովվում է մասնաճյուղի բոլոր գործընթացների հաշվետվողականությունը և թափանցիկությունը, վեր են հանվում թերությունները ու բացթողումները, մշակվում բարելավման ծրագրեր:

2. Կրթական ծրագրերի տարեկան **մշտադիտարկումը և պարբերական վերանայումը**, որոնց արդյունքում կազմվում են ծրագրերի արդիականացմանն ու բարելավմանն ուղղված պլաններ, իրականացվում են համապատասխան միջոցառումներ:

3. **Կրթական ծրագրերի ղեկավարների** ինստիտուտի առկայությունը (2016թ.-ից):

4. Մասնաճյուղում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության կանոնակարգված հարցումները (*2008թ.-ից, ԵՊՀ ՐՄ ԳԽ, 26.12.2017թ.*), որոնց արդյունքներն օգնում են վերանայել կրթական ծրագրերի բովանդակությունը, ներդնել դասավանդման, ուսումնառության և գնահատման նոր մեթոդներ, բարելավել ուսումնառության ռեսուրսները և այլն:

5. Արտաքին շահակիցների հետ 2014թ.-ից պարբերաբար կազմակերպվող **հանդիպում–քննարկումները**, որոնց ընթացքում պարզաբանվում են մասնագիտությունների ճշգրտման, ուսանողների մասնագիտական պրակտիկ կրթության ու շրջանավարտների ապագա կարիերային աջակցելու հարցեր, մշակվում փոխշահավետ համագործակցության ծրագրեր:

6. Ավարտական կուրսերի ուսանողների հետ ամփոփիչ ատեստավորման քննություններից հետո հանդիպում-քննարկումները (*2019թ.-ից*), որոնց ժամանակ պարզաբանվում են կրթական ծրագրով սահմանված վերջնարդյունքների և շրջանավարտների ձեռք բերած գիտելիքների ու մասնագիտական կարողությունների համադրելիության վերաբերյալ հարցեր:

7. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում արտաքին շահակիցների ներգրավումը (*2014թ.-ից*)՝ նրանց կարծիքներն օգտագործվում են կրթական ծրագրերի վերանայման ժամանակ:

8. Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական կանոնակարգված հարցումները (*2007թ.–ից, ԳԽ, 27.01.2017թ.*), որոնց օգնությամբ գնահատվում են դասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական որակները, ֆակուլտետի դեկանի, դեկանի տեղակալի, դեկանատի գործավարի, ուսումնական խորհրդատուների աշխատանքները: Արդյունքներն օգտագործվում են հիմնական դասախոսական կազմի ընտրության, վերապատրաստումների, առաջքաշման և խրախուսման գործընթացներում:

9. Կանոնակարգված դասալսումները ամբիոնների վարիչների կողմից (*ԳԽ, 17.10.2014թ*), որոնց արդյունքներն օգտագործվում են դասավանդման և ուսումնառության գործընթացի կատարելագործման, դասավանդման որակի բարելավման, հաջողված փորձի փոխանակման և ներդրման համար և այլն:

10. Դասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրերը (*2011թ.–ից, ԳԽ, 11.02.2017թ.*), որոնք նպատակաուղղված են դասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական հմտությունների բարելավմանը:

11. **Ներքին շահակիցների** շրջանում անցկացվող **բավարարվածության տարբեր հարցումները**, մասնավորապես, ուսանողների, պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմի մասնաճյուղից բավարավածության հարցումները (*2015թ.-ից*), մասնաճյուղում ուսանողների գնահատումից դասախոսների և ուսանողների բավարավածության հարցումները (*2013թ.-ից*), պրակտիկաների կազմակերպումից ուսանողների բավարարվածության հարցումները (*2015թ.-ից*), մասնաճյուղում գիտական գործունեության հնարավորությունների վերաբերյալ դասախոսական հարցումները (*2016թ.-ից*), որոնց միջոցով հավաքագրված տվյալներն օգտագործվում են համապատասխան գործընթացների բարելավմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների մշակման ժամանակ: **2018թ.-ից** նշված հարցումներն ուսանողների և դասախոսների համար առանձին իրականացվում են մեկ հարցաշարով և առցանց:

12. **Արտաքին շահակիցների** շրջանում անցկացվող մասնաճյուղի պրակտիկանտ-ուսանողների և շրջանավարտների վերաբերյալ նրանց կարծիքի ուսումնասիրության կանոնակարգված հարցումները (*2011թ.-ից*): Նրանց կարծիքներն օգտագործվում են կրթական ծրագրերի վերանայման, դասախոսների կողմից դասավանդման և ուսումնառության մեթոդների

ընտրության ժամանակ:

13. «Դասընթացների փաթեթներ»-ի կիրառումը դասախոսների կողմից (**2014թ.-ից**), որը հնարավորություն է տալիս դասախոսներին պլանավորել իրականացնել, գնահատել և վերանայել դասընթացը: 2019-20 ուստարվա ուսումնասիրության արդյունքներով մասնաճյուղի տարբեր կրթական ծրագրերով իրականացվող դասընթացների **75%-ի** համար առկա են պորտֆոլիոներ, մյուսներն ընթացքի մեջ են (հիմք ՄԿՈԱ բաժնի 29.10.2019թ. արձ.): 2019թ.-ից փաթեթի մեջ ներդրվել է նաև դասընթացի գնահատման հարցումի պահանջը, որը դեռևս 2014թ.-ից իրականացվում էր մի քանի դասախոսների կողմից: Նման հարցման արդյունքները կօգնեն դասախոսին դասընթացի վերանայման և նոր պլանավորման ժամանակ:

14. Որակի ներքին գործընթացներին աջակցող **ուսանողական աշխատանքային խմբերի** առկայությունը, որոնց օգնությամբ կրթական և ուսումնական տարբեր խնդիրների վերաբերյալ պարբերաբար իրականացվում են հանդիպում-քննարկումներ ուսանողների հետ:

15. Հասարակության տարբեր խավերի շրջանում անցկացվող անմիջական և առցանց **հարցումները** (2018թ., 2019թ.), որոնք նպատակ ունեն պարզելու նրանց կարծիքը մասնաճյուղի վերաբերյալ, բավարավածությունը նրա գործունեությունից և պահանջվածությունը:

16. Ֆոկուս խմբերով հանդիպումները թիրախային տարբեր խմբերի հետ (մագիստրատուրա գնացող շրջանավարտների, շրջանավարտների, ավարտական կուրսերի ուսանողների, պրակտիկանտների, պրակտիկաների ղեկավարների, ուսանողների, արտաքին շահակիցների):

ՈԱ վերոնշյալ մեխանիզմներն ու ընթացակարգերը պաշտոնապես հաստատված են ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ԳԽ կողմից, դրանց մասին իրազեկված են մասնաճյուղի բոլոր ուսումնական և վարչական կառույցները, իսկ արտաքին շահեկիցներին և լայն հանրությանը հասանելի դարձնելու նպատակով տեղադրված են մասնաճյուղի պաշտոնական կայք էջում:

Մասնաճյուղում ընթացքի մեջ է որակի ապահովման ձեռնարկի մշակումը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Բ. Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

2009թ. դեկտեմբերին մասնաճյուղում ստեղծվել է Որակի ապահովման և վերահսկման հանձնաժողով, որը 2015թ.-ից վերանվանվել է գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի և հաստատվել է նրա կանոնակարգը (***ԵՊՀ ԻՄ ԳԽ, 31.10.2015թ.***): Այն որակի ապահովման գործընթացները կառավարող մարմին է, որի նպատակը մասնաճյուղում որակի մշակույթի ձևավորումն ու զարգացումն է: 2011թ.-ից մասնաճյուղում գործում է ֆակուլտետներում որակի կառավարման հանձնաժողովի լիազոր ներկայացուցիչների ինստիտուտը, նրանց գործունեությունը և հիմնական գործառույթներն այժմ ներկայացված են նոր կանոնակարգում (***ԵՊՀ ԻՄ ԳԽ, 31.10.2015թ.***):

2011թ. հոկտեմբերին մասնաճյուղում ձևավորվել է կրթության որակի ապահովման և գնահատման (ԿՈԱԳ) բաժինը, որը 2014թ. վերանվանվել է Մասնագիտական կրթության որակի ապահովման (ՄԿՈԱ) բաժնի՝ իր կանոնադրությամբ (***ԳԽ, 26.12.2016թ.***): Բաժինը ԵՊՀ ԻՄ-ի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում է, որի հիմնական նպատակը համալսարանում որակի ներքին ապահովման համակարգի կայուն ներդնելն է և դրա արդյունավետ իրականացումը: Բաժինն իր գործունեությունը պլանավորում է համաձայն մասնաճյուղի զարգացման (**2016-2020թթ.**) ռազմավարական պլանի, իրականացնում է այն և մշտապես տալիս է հաշվետվություն իր գործունեության վերաբերյալ:

2011թ.-ից գործարկվել է մասնաճյուղի պաշտոնական կայքը, որը հանդիսանում է մասնաճյուղի ռազմավարական գործունեության ամենակարևոր միջոցը, պարբերաբար հարստացվում և արդիականացվում են նրա բովանդակային և ծրագրային բաղադրիչները (***ՌԾ, գործ.3.1.3***), իսկ 2018թ.-ից գործում է նրա եռալեզու տարբերակը (***ՌԾ, գործ.9.1.3***), որն ապահովում է մասնաճյուղի միջազգայնացման հնարավորությունը:

ՄԿՈԱ բաժինը բացի հաստիքային աշխատակիցներից իր գործընթացների մեջ ներգրավում է **ուսանողական խմբեր** (***ՌԾ, գործ.1.3.1***), ովքեր օգնում են ներքին և արտաքին շահակիցների կարիքների ուսումնասիրման գործընթացում, կազմակերպում են քննարկումներ ուսանողության շրջանում, հավաքագրում են խնդիրներ, հետամուտ են լինում դրանց լուծումների վերաբերյալ արդյունքների հրապարակայնացմանը և ուսանողների տեղեկացվածությանը:

Մասնաճյուղի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնագնահատման գործընթացներն իրականացնելու համար մասնաճյուղի տնօրենի հրամանով ձևավորվում է աշխատանքային խումբ, որում ներգրավվում են մասնաճյուղի տարբեր ստորաբաժանումների աշխատակիցներ և ուսանողներ:

Ներքին և արտաքին շահակիցների շրջանում տարաբեր ուսումնասիրությունների նախապատրաստման, անցկացման, արդյունքների մշակման ու ամփոփման համար մասնաճյուղը հատկացնում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ (ՌԾ իրականացման ժամանակացույց-պլան): Ֆինանսական ռեսուրսերի առումով բաժինը չունի հատուկ ֆինանսական միջոցներ, սակայն մասնաճյուղը վարում է որակի ապահովման գործընթացների ֆինանսական ապահովման հաստատված քաղաքականություն (***ԵՊՀ ԻՄ ԳԽ, 28.12.2013թ.***): Ֆինանսական միջոցների կարիք ունենալու դեպքում համալսարանի բյուջեից կարող են հատկացվել համապատասխան միջոցներ (***ԵՊՀ ԻՄ կանոնադրություն 1.6***):

2018թ. դեկտեմբերին ՄԿՈԱ բաժնի աշխատակիցները և որակի ապահովման գործընթացներին աջակցող ուսանողական խմբերը հասարակության շրջանում հերթական հարցումն իրականացնելու համար ստացել են համապատասխան ֆինանսկան աջակցություն՝ ամանորյա փոքրիկ նվերներով բնակչությանը այցելելու համար:

2019թ. հունիսի 14-ին Հայ-ռուսական համալսարանում կայացել է «Որակավորումների արժանահավատ շնորհում» թեմայով ուսանողների և դասախոսների համաժողով, որը կազմակերպել էր որակի ապահովման ազգային կենտրոնը՝ իր 10-ամյակի միջոցառումների շրջանակում, որին գործուղվել են մասնաճյուղի շուրջ 20 աշխատակիցներ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:

Մասնաճյուղում իրականացվող որակի ապահովման բոլոր գործընթացներում որոշակի դերակատարություն է վերապահված ներքին և արտաքին շահակիցներին: Նրանք ներգրավված են մասնաճյուղի ԳԽ-ում և ֆակուլտետների գիտական խորհուրդներում, Գիտական խորհրդին կից որակի կառավարման հանձնաժողովում, մանդատային հանձնաժողովում, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում, մասնագիտությունների կրթական ծրագրերը մշակող և վերանայող աշխատանքային խմբերում, ինչպես նաև ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնագնահատման աշխատանքային խմբի կազմում: Ուսանողներն ակտիվորեն մասնակցում են մասնաճյուղի կողմից իրականացվող տարաբնույթ հարցումների համար հարցաշարերի մշակմանը, հարցումների կազմակերպմանը և անցկացմանը, արդյունքների մշակմանը և ներկայացմանը:

2015թ.-ից գործում են ՄԿՈԱ բաժնին կից որակի ներքին ապահովման գործընթացներին աջակցող ուսանողական աշխատանքային խմբեր: Նրանք ուսանողների շրջանում կազմակերպել են մի շարք քննարկումներ, օրինակ, մասնաճյուղում ակադեմիական ազնվության առկա մակարդակից ուսանողների բավարարվածության և ակադեմիական անազնվության դրսևորումների ու հետևանքների հետ կապված խնդիրների վեր հանման վերաբերյալ, պրակտիկանտ ուսանողների վերաբերյալ գործատուների կարծիքների վերաբերյալ, դասընթացի գնահատման հարցաշարի վերաբերյալ և այլն:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

Որակի ապահովման համակարգի վերանայման և բարելավման համար հիմք են հանդիսանում մասնաճյուղում բարձրորակ կրթություն ապահովող բոլոր օղակների գործունեությունից ներքին և արտաքին շահակիցների բավարարվածության վերաբերյալ տարբեր մեխանիզմներով իրականացվող ուսումնասիրությունների արդյունքները: Այդ արդյունքների համադրման և վերլուծության արդյունքում բացահայտվում են այն օղակները և գործընթացները, որոնք չեն բավարարում շահակիցների պահանջմունքներին, դիտարկվում են շահակիցների կարծիքները և առաջարկները: ՄԿՈԱ բաժինը կազմում է խնդիրների և առաջարկների փաթեթ և ներկայացնում է մասնաճյուղի ղեկավարությանը և համապատասխան ստորաբաժանումներին, մշակում է անբավարար գործընթացների բարելավման ծրագրեր:

ՄԿՈԱ բաժինը պարբերաբար վերանայում և թարմացնում է որակի գործընթացների իրականացման ընթացակարգերը, հարցաշարերը, հետազոտության մեթոդները և գործիքները: Վերջին տարիներին բոլոր հարցումներն **անց են կացվում առցանց**՝ առավել իրական պատկեր և օբյեկտիվ գնահատական ստանալու համար: Բաժինը պարբերաբար կազմակերպում է **խորհրդատվական հանդիպումներ** կրթական ծրագրերի ղեկավարների, ստորաբաժանումների ղեկավարների, դասախոսների, ուսանողական կառույցների ներկայացուցիչների համար: Ամբիոններում կազմակերպում է դասընթացների փաթեթների վերաբերյալ խորհրդատվություններ: 2019թ.-ին վերանայվել է դասընթացների փաթեթի ուղեցույցը՝ ներառվել են որակի ապահովման մի շարք պահանջներ, մասնավորապես ներառվել է դասընթացի գնահատման հարցաշարը, մի շարք քննարկումներից հետո վերանայման փուլում է ակադեմիական ազնվության կանոնակարգը, որի հիման վրա 2019 թվականին ՄԿՈԱ բաժնի կողմից մշակվել և քննարկման է ներկայացվել «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի վարչական, ակադեմիական աշխատակազմերի և ուսանողների համար էթիկայի կանոնագիրք»-ը, որը կներկայացվի մասնաճյուղի գիտխորհուրդ հաստատման: 2018թ.-ի սեպտեմբերին բաժինը ներդրել է **աշխատանքային պլանների կազմման և դրանց կատարողականի վերաբերյալ** հաշվետվությունների պատրաստման նոր ձևաչափերը: 2014թ.-ից բաժինը ներդրել է **ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կարծիքների հավաքագրման** նոր ձևաչափը, որի միջոցով հանձնաժողովը գնահատում է շրջանավարտների մասնագիտական կոմպետենցիաները:

Մասնաճյուղը համեմատական վերլուծություն է կատարել ԵՊՀ-ի, Երևանի պետական տնտեսագիտական համալսարանի, Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի որակի ներքին ապահովման գործընթացների և ընթացակարգերի հետ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ե. Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի որակի ապահովման համակարգն իր գործունեությամբ ստեղծել է անհրաժեշտ փաստաթղթային և տեղեկատվական հիմքեր մասնաճյուղի

գործունեության լիարժեք, թափանցիկ ներկայացման համար, մշտապես կատարել է իր գործունեության գնահատումներ, որոնցում նշվել են ոչ իայն ձեռքբերումները, այլ նաև բաց թողումները, մշտապես հանրությանը հասանելի է դարձրել իր պլանները: Մասնաճյուղն ունի բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման համար:

ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

Մասնաճյուղի ՄԿՈԱ բաժինն աշխատում է բոլոր ստորաբաժանումների հետ, իր խորհրդատվություններով աջակցում է գործունեության ճիշտ պլանավորման և գնահատման հարցերում, մշտապես ուսումնասիրում է նրանց ձեռքբերումները, առաջարկում է բարելավման համապատասխան մոտեցումներ՝ մշակելով տարբեր ձևաչափեր, ուղեցույցներ և ընթացակարգեր: Մասնաճյուղի կարևոր խնդիրն է ապահովել ՈԱ գործընթացների թափանցիկությունը և տեղեկատվության հասանելիությունը հասարակությանը (ՌԾ, գործ. 8.4.6): Հավատարիմ իր ռազմավարությանը, մասնաճյուղի ՈԱ համակարգի գործունեությունը թափանցիկ է և բոլոր արդյունքների մասին տեղեկատվությունը տրամադրվում է շահագրգիռ բոլոր կողմերին:

Ներքին և արտաքին շահեկիցների համար մասնաճյուղի գործունեության թափանցիկությունն ապահովելու համար կարևոր է նրանց տեղեկացվածությունն ապահովող գործիքների առկայությունը: Այդ նպատակով մասնաճյուղում գործադրված են ներքին և արտաքին տեղեկատվության մի շարք մեխանիզմներ, որոնցից են.

1. Մասնաճյուղի պաշտոնական կայքը՝ իր բոլոր բաժիններով,
2. **«Կրթության որակի կառավարում»** բաժնի առկայությունը, որը հանրությանը ներկայացնում է մասնաճյուղի քաղաքականությունը կրթության որակի բնագավառում, տրամադրում է տեղեկատվություն որակի տարբեր գործընթացների և դրանց արդյունքների վերաբերյալ, հանրայնացնում է մասնաճյուղում իրականացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնագնահատման բոլոր զեկույցները, ներքին շահակիցներին տրամադրում է կրթության որակի ապահովման վերաբերյալ ժամանակակից գրքեր և ուղեցույցներ (2019թ.-ից) և այլն:
3. ԵՊՀ ԻՄ գործունեության վերաբերյալ տնօրենի ամենամյա հաշվետվությունը ԵՊՀ գիտական խորհրդում, որտեղ ամփոփվում են նաև մասնաճյուղի անցնող ուստարում ուսումնական, գիտահետազոտական ու վարչական կառույցների գործունեության հիմնական արդյունքները:
4. Ռազմավարական ընթացիկ պլանի կատարողականի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի զեկույցները մասնաճյուղի գիտական խորհրդում:
5. Ֆակուլտետների և կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության վերաբերյալ նրանց ղեկավարների տարեկան հաշվետվությունները մասնաճյուղի գիտական խորհրդում:
6. Մասնաճյուղի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների (ԳԱՑ) լրակազմը, որը պարբերաբար հրապարակվում է, տրամադրվում է բոլոր ստորաբաժաննումներին և նպատակ ունի քանակական ցուցանիշների օգնությամբ ներկայացնել մասնաճյուղի ձեռքբերումներն ու բացթողումները վերջին 5 տարիների համար:
7. Ներքին և արտաքին շահակիցների շրջանում անցկացվող տարաբնույթ հարցումների արդյունքներն ու վերլուծությունները, որոնք ներկայացվում են նաև ուսանողների, դասախոսների և մասնաճյուղի գիտական խորհրդի քննարկմանը:
8. Ուսանողների առաջադիմության և շարժի, ինչպես նաև ուսումնական այլ գործընթացների վերաբերյալ տեղեկատվությունն ապահովող **“Supervision”** ավտոմատացված էլեկտրոնային

համակարգը, որը հասանելի է դարձնում ուսումնական գործընթացին առնչվող տվյալների մեծածավալ բազան:

9. Ֆակուլտետների գործունեության վերաբերյալ մաքսիմալ տեղեկատվության առկայությունը կայքի **«Ֆակուլտետներ»** և **«Ամբիոններ»** բաժնում: Մասնավորապես,

- ✓ Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցները և դասընթացների տեղեկագրքերը, որոնք տեղեկատվություն են տալիս մասնաճյուղում ուսումնառության կազմակերպման վերաբերյալ,
- ✓ բակալավրի կրթական ծրագրերը, որոնք ներքին և արտաքին շահակիցներին ամբողջական տեղեկատվություն են տրամադրում կոնկրետ մասնագիտության կրթական ծրագրի ու առանձին դասընթացների վերաբերյալ:
- ✓ Դասացուցակները և ուսանողների առաջադիմության արդյունքները,
- ✓ Ամբիոններում դասախոսական կազմը, դասալսումների գրաֆիկը, աշխատանքային պլանները, տարեկան հաշվությունները և այլն:

10. Մասնաճյուղում իրականացվող բակալավրի կրթական ծրագրերի ցանկի և բոլոր ծրագրերի կրթական վերջնարդյունքների առկայությունը կայքի **«Ուսանող»** բաժնում, որոնց միջոցով արտաքին շահակիցները, մասնավորապես դիմորդները, տեղեկատվություն և պատկերացում են ստանում ծրագրի շրջանավարտի մասնագիտական ապագա որակների վերաբերյալ:

11. Պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի վերաբերյալ տեղեկատվության առկայությունը կայքի **«Մասնաճյուղի կառուցվածք»** բաժնում (2019թ.-ից):

12. Մասնաճյուղի կրթական և գիտական գործունեության կանոնակարգային բոլոր փաստաթղթերի հրապարակայնացումը կայքի «Փաստաթղթեր» բաժնի միջոցով:

13. Հետադարձ կապի ապահովումը արտաքին շահակիցների համար, որը հնարավորություն է տալիս առցանց ուսումնասիրելու և հավաքագրելու նրանց առաջարկները, պատասխանելու նրանց հետաքրքրող հարցերին:

Ըստ ՄԿՈԱ բաժնի ուսումնասիրությունների արդյունքների, մասնավորապես հարցումներին մասնակցած հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչների **91%-ը բավարարված է** մասնաճյուղի թափանցիկ գործունեությունից և տեղեկատվության հասանելիության ապահովումից, ներքին շահակիցները բավարարված են կայքում տեղեկատվության ամբողջականությունից և բովանդականությունից, ստորաբաժանումների աշխատանքից և այլն:

Ուժեղ կողմեր (Strengths)	**Հնարավորություններ (Opportunities)**
1. Որակի ապահովման ոլորտին առնչվող ռազմավարական նպատակների և խնդիրների առկայությունը մասնաճյուղի զարգացման ռազմավարական ծրագրում 2. Որակի ապահովման կառույցի առկայությունը և տեխնիկապես հագեցվածությունը 3. Կրթության որակի բնագավառում մասնաճյուղի քաղաքականության առկայությունը 4. ԵՊՀ ԻՄ-ի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների առկայությունը 5. Կառուցվածքային ստորաբաժանումներում լիազոր-ներկայացուցիչների առկայությունը	1. Որակի ապահովման ազգային կենտրոնի հետ ակտիվ համագործակցություն 2. Որակի ապահովման գործընթացների քաղաքականության և ընթացակարգերի բենչմարքինգի ուղղությամբ Մայր բուհի աջակցությունը

6. Մասնաճյուղում ինստիտուցիոնալ կարողությունների վերլուծությունն իրականացնող աշխատանքային խմբի առկայությունը և ինքնավերլուծության պարբերաբար իրականացումը 7. Որակի ապահովման մշակված մեխանիզմների և գործիքների առկայությունը 8. Որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը 9. Մասնաճյուղի աշխատակիցների մասնակցությունը ՈԱԱԿ-ի կողմից պարբերաբար կազմակերպվող վերապատրաստումներին 10. Մասնաճյուղի մասնակցությունը ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված փորձնական հավատարմագրմանը (2011թ., 2013թ.,) 11. Մասնաճյուղի գործունեության և որակի ապահովման գործընթացների թափանցիկությունը	3. Մայր բուհի Որակի ապահովման կենտրոնի հետ համագործակցությունը
Թույլ կողմեր (Weaknesses)	**Վտանգներ(Threats)**
1. Որակի ապահովման և հետադարձ կապերի որոշ մեխանիզմների անկատարությունը 2. Աշխատանքային խմբի հասարակական հիմունքներով աշխատելը 3. Որակի ապահովման գործընթացների քաղաքականության և ընթացակարգերի բենչմարքինգի անկատարությունը 4. Որակի ապահովման գործընթացներում մասնաճյուղի ստորաբաժանումների ոչ լիարժեք ներգրավվածությունը 5. Որակի ապահովման ձեռնարկի բացակայությունը 6. Որակի ներքին ապահովման համակարգի վերանայման քաղաքականության բացակայությունը 7. ՈԵրակի ներքին ապահովման գործընթացներում մասնագետ կադրերի պակասությունը	1. Ֆինանսական մուտքերի նվազումը 2. Արտաքին շահակիցների կողմից որակի ապահովման գործընթացների նկատմամբ անտարբերությունը 3. Այլ բուհերի կողմից համագործակցության պասիվ դիրքորոշումը

Ինչպես պետական և կրթության ոլորտի կառավարման մարմինների, այնպես էլ հասարակության կողմից առանձնահատուկ ուշադրության է արժանանում մասնագիտական կրթության որակի ապահովումը: Բնականաբար, մասնաճյուղը անմասն չի մնում նշված գործընթացից, որի բարելավման համար նախատեսվում է.

- վերանայել և բարելավել որակի ապահովման մեխանիզմները և ընթացակարգերը,
- ներգրավել որակի ապահովման գործընթացում մասնաճյուղի ներքին շահակիցներին,
- ձևավորել արտաքին շահակիցների հետ կայուն հետադարձ կապի մեխանիզմներ,
- մշակել և հրատարակել որակի ապահովման ներքին համակարգի ձեռնարկ,
- մշակել որակի ներքին ապահովման համակարգի վերանայման քաղաքականություն,
- ինքնավերլուծության հիման վրա վերանայել որակի ներքին և արտաքին ապահովման գործընթացները: